# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2019/101, 06.12.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «Խաչպար» ՍՊԸ

**Պատվիրատու՝** ՀՀ պաշտպանության նախարարություն

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» գնանշման հարցման ընթացակարգ

**Գնման առարկան՝** Ատամնաբուժական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝** Արգելել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշում՝ Հրավերի ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10, 11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿԱՅՆ

**Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ
ՄՈՒՏՔ N 54867
«06» 12 2019թ.

# ԲՈՂՈՔ

1) **Բողոք բերող անձ՝** <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Րաֆֆու 33/7
2) **Պատվիրատուի անվանումը՝** ՀՀ ՊՆ
Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

3) **Գնանշման հարցման ծածկագիրը՝** « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23»
**և առարկան՝** <<Ատամնաբուժական պարագաների և ծախսվող նյութերի ձեռք բերում>>

4) **Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝**

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն <<Ատամնաբուժական պարագաների և ծախսվող նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. նոյեմբերի 12-ի թիվ 1.1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 56 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ատամնաբուժական պարագաներ և ծախսվող նյութեր (կից փաստաթուղթ թիվ 2):

22.11.2019թ. <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով փաստվել է, որ Հրավերին մասնակցելու հայտ են ներկայացրել երկու մասնակիցներ՝ <<Էսզեթ Ֆարմա>> և <<ԴԱՎ ՊՐՈԴՈՒԿՏՍ>> ՍՊԸ-ները (կից փաստաթուղթ թիվ 3, էջ 1, կետ 1.1), սակայն <<ԴԱՎ ՊՐՈԴՈՒԿՏՍ>> ՍՊԸ-ի կողմից www.armeps.am համակարգ բեռնված հայտում բացակայում են էլեկտրոնային փաստաթղթերը՝ այդ թվում նաև գնային առաջարկը, հետևաբար գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատել ներկայացված հայտը (կից փաստաթուղթ թիվ 3, էջ 1, կետ 2.1):

<<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը գնահատվել են հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, իսկ մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանող (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 2 և 3, կետեր 3.1 և 3.2):

26.11.2019թ. գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 40-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով՝ որպես հայտ ներկայացրած միակ մասնակից, իսկ թիվ 5, 7 և 26-րդ չափաբաժինների մասով՝ որպես որպես նախահաշվային գները գերազանցող գներ առաջարկած, <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ին հրավիրել է ներկայացված գների նվազեցման նպատակով կազմակերպվելիք բանակցությունների (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 3, կետ 3.3):

02.12.2019թ. <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ն չի ներկայացել գների նվազեցման նպատակով կազմակերպվելիք բանակցություններին (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 3, կետ 3.3), ուստի ներկայացված գները մնացին անփոփոխ (կից փաստաթուղթ թիվ 4):

02.12.2019թ. գնահատող հանձնաժողովը <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ին ճանաչել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով (կից

փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 3, կետ 4.1), և նախատեսել է ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրելու օրը (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 4, կետ 6.1):

<<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերին հայտեր ներկայցրած Մասնակիցների հայտերի էլեկտրոնային գնահատման արդյունքում Հրավերի պահանջներին համապատասխան գնահատված միայն մեկ հայտը ներկայացրած Մասնակցի՝ <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ի կողմից, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Կարգի 40-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջներով սահմանված գների նվազեցման նպատակով կազմակերպվելիք բանակցություններին չներկայանալը պարտադրել է գնահատող հանձնաժողովին՝ միակ Մասնակցին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով՝ հայտով առաջարկված գներով (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 3, կետ 4.1):

Այս չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող Մասնակից ճանաչված <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ի կողմից թվով 36 չափաբաժինների համար առաջարկված գները ամբողջությամբ համընկնում ու համապատասխանում են Պատվիրատուի նախահաշվային գների հետ Հրավերի թիվ 2, 4, 11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով, իսկ մնացած՝ թիվ 1, 3, 6, 10 և 32-րդ չափաբաժինների մասով, մի փոքր են պակաս Պատվիրատուի նախահաշվային գներից, ինչի արդյունքում Պատվիրատուն այդ թվով 36 չափաբաժինների մասով ապրանքները պետք է ձեռք բերի նախահաշվային ընդհանուր գումարի չափից՝ 35044760 (երեսունհինգ միլիոն քառասունչորս հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, շատ աննշան էժան գումարով՝ 34649560 (երեսունչորս միլիոն վեց հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամով, որոնց տարբերությունը կազմում է ընդամենը 395200 (երեք հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր ՀՀ դրամ (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները):

Վերոգրյալը ցույց է տալիս, որ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով՝ գնահատող հանձնաժողովի կողմից <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և նրա հետ ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելու պարագայում, Պատվիրատուի կարիքներին համապատասխանող ապրանքների ձեռքբերման գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ չի իրականցվելու, հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված նպատակներին:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի գործողությունները Հրավերի ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

**Ընդունելու որոշում՝ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին արգելելու ընդունել <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշում՝ Հրավերի ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով:**

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Ներկայացված փաստաթղթերը, Պատվիրատուի նախահաշվային և միակը մնացած Մասնակցի կողմից առաջարկված գների համադրումներն ու համեմատությունները փաստում են, որ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Հրավերի պահանջներին համապատասխան գնահատված միայն մեկ հայտը ներկայացրած Մասնակցի՝ <<Էսգեթ Ֆարմա>> ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով առաջարկված գներով՝ միակ Մասնակցին գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող ճանաչելու և նրա հետ ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելու պարագայում, Պատվիրատուի կարիքներին համապատասխանող ապրանքների ձեռքբերման գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ չի իրականցվելու, հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված նպատակներին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 9 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

6 դեկտեմբերի 2019թ.

**E-mail:** khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, h/h 2050922055871001